

"Մասունցի Դավիթ" էպոսի 1075-ամյա հոբելյանը

75 տարի առաջ, 1939 թվականին սովետական ողջ ժողովուրդը նշեց հայոց ազգային էպոսի ստեղծման հազարամյակը:

Ինչպես գրել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դյուցազներգություններ, որոնց մեջ ամենաբնորոշը, առավել նշանակալիցը, ամենից ավելի արտահայտիչն ու հերոսականը, մեծն ու համայնապարփակը "Մասունցի Դավիթ" էպոսն է:

"Մասունցի Դավիթ" էպոսում չորս սերնդի պատկանող հերոսներ, միմյանց լրացնելով, ավելի ճիշտ՝ միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են իրենց կերպարներն ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները:

Այդ կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է նաև այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն հրահրում, բայց ստիպված են կռվել, ովքեր չեն ուզում հեղել ոչ իրենց, ոչ էլ այլոց արյունը՝ ի հաճույս իշխելու տենդով բռնված զավթիչների: Այդ հայացքները խարսխված են այն դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, օտար նվաճողների լծի ներքո կրած տառապանքների բովում:

Մեկ առանձնապես մոտ է հասկանալի է ժողովրդի գիտակցության մեջ անհիշելի ժամանակներում ստեղծված Մասունցի Դավթի կերպարը, որը ջերմ ու անաղարտ սիրտ ունի, արձագանքում է օգնության մեն մի կանչի և սխրագործություններ է կատարում ի բարօրություն իր ժողովրդի, իր հայրենիքի:

Հոբելյանական տարին "Մասունցի Դավթի" համար եղավ շրջադարձային: Էպոսն ունեցավ մի քանի հրատարակություն, համակողմանիորեն ուսումնասիրվեց գիտնականների կողմից: Եվ ետհոբելյանական շրջանը կարելի է բնութագրել որպես "Մասունցի Դավթի" հաղթարշավի ժամանակաշրջան: Այն թարգմանվեց բազմաթիվ լեզուներով, գրի առնվեցին նոր պատումներ, հրատարակվեցին նոր ուսումնասիրություններ և, որ ամենակարևորն է, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում ստեղծվեց "Մասունցի Դավթ" էպոսի ուսումնասիրման հատուկ գիտական խումբ:

"Մասունցի Դավիթ" էպոսի առաջին պատումը գրի է առել հայ մշակույթի մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը 1873 թվականին Տարոնի Առնիստ գյուղի բնակիչ Կրպոյից և հրատարա-

կել Կ. Պոլսում 1874 թվականին "Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ" խորագրով:

Հետագա տարիներին էպոսի նոր պատումներ են գրի առնում և հրատարակում Մանուկ Աբեղյանը, Գարեգին Հովսեփյանը, Կարո Մելիք-Օհանջանյանը (ավելի քան 12 պատում), Արամ Ղանալանյանը և ուրիշներ: 1873-1936 թվականներին հավաքվում և հրատարակվում է շուրջ 60 պատում՝ "Մասնա ծոեր" ընդհանուր խորագրով երեք սովորաձավալ գրքով՝ Մանուկ Աբեղյանի խմբագրությամբ և Կարո Մելիք-Օհանջանյանի աշխատակցությամբ:

1938 թվականին կազմվում է գիտական հանձնախումբ, որի վրա պարտականություն է դրվում՝ "Մասնա ծոերի" շուրջ 60 պատումների հիման վրա հյուսել համահավաք բնագիրը: Ժամանակը շատ կարճ էր. պետք էր մինչև տարվա վերջը ոչ միայն ավարտել գործը, այլև նրա ռուսերեն թարգմանությունը, այն հաշվով, որ հոբելյանի օրերին դրանք լույս տեսնեն Երևանում և Մոսկվայում: Այս դժվարին խնդրի իրականացման են լծվում Մանուկ Աբեղյանը, Գևորգ Աբովը և Արամ Ղանալանյանը: Համահավաք տեքստի առաջաբանն է գրում Հովսեփ Օրբելին:

Տասնիններորդ դարի 70-ական թվականներից սկսվեց հայ ժողովրդական էպոսի գրավոր կյանքը: Առաջին պատումի հրատարակումից հետո էպոսը դարձավ գեղարվեստական ստեղծագործության նյութ: Լույս տեսան տարբեր պատումներ՝ փոխադրված գրական լեզվի (Մանդինյան՝ 1893 թ., ճաղարբեկյան՝ 1895 թ.): Ազգային վեպը ստեղծագործական ներշնչանքի աղբյուր դարձավ գեղարվեստական խոսքի վարպետների համար:

Առաջինն իր ուժերը փորձեց Գ.Բալասանյանը՝ 1893 թվականին հրատարակելով "Առյուծաձև Մհեր" դյուցազներգական-չափական բանաստեղծությունների գրքույկը: Նրանից հետո էպոսի մշակմանը դիմեց Հովհաննես Թումանյանը: Նա "Մասունցի Դավիթ" (1903) դյուցազնավեպի համար նյութ է ընտրել էպոսի ամենաձավալուն և ամենահերոսական ճյուղը: Թումանյանի պոեմին հաջորդեց Ավետիք Իսահակյանի "Մասնա Մհեր" վիպերգը, որն ընդգրկում է էպոսի չորրորդ ճյուղը: Հերոսական վեպի մշակմամբ զբաղվել է նաև Եղիշե Չարենցը, 1933-ին նա գրել է "Մասունցի Դավիթ" պոեմը:

Հայ ժողովրդական էպոսի մշակումների շարքում ուրույն տեղ են գրավում դրամատիկական մշակումները: 1979 թվականին Երևան եկավ հայ ժողովրդական էպոսի մի յուրօրինակ մշակում՝ Էդգար Հով-



Մասունցի Դավթի արձանը Երևանի երկաթուղային կայարանի դիմացի հրապարակում (գործ Երվանդ ԲՈՉԱՆԻ):

հաննիսյանի "Մասունցի Դավիթ" բալետը:

"Մասունցի Դավիթ" դյուցազներգությունը հապարամյա հոբելյանի տոնակատարությունից հետո արժանացավ համաշխարհային ճանաչման: Հայոց էպիկական վեպը թարգմանվեց Արևմուտքի և Արևելքի բազմաթիվ ժողովուրդների լեզուներով:

Շատ բարձր է գնահատվել դյուցազներգի անգլերեն հրատարակությունը Լևոն Զավեն-Սյուրմեյանի թարգմանությամբ, որը լույս է ընծայվել 1964 և 1966 թվականներին: Նա էլ կատարել է նույն տեքստի հոլանդական թարգմանությունը:

Համահավաք տեքստի ֆրանսերեն թարգմանությունը հաջողությամբ իրականացրել է Ֆեդերիկ Ֆեյդին:

Էպոսը ամբողջությամբ և մասնակի թարգմանվել է ռումիներեն, լեհերեն, չեխերեն, հունգարերեն և այլ լեզուներով:

Հայկական էպոսի համահավաք տեքստի չինարեն թարգմանությունը կատարել է Խո-Ինժենը (հրատարակվել է 1957 թվականին

Պեկինում): Պարսկերեն լույս է տեսել Գեորգիա Աղասու և Ալ. Պատմագայանի թարգմանությամբ (1969): Ըստ պարսկական հրատարակության վկայության հայոց էպոսը թարգմանվել է նաև ճապոներեն:

Հովհաննես Թումանյանի "Մասունցի Դավիթ" պոեմը արաբերեն լեզվով լույս է տեսել Բեյրութում 1969 թվականին:

Հայոց էպոսը թարգմանվել և հրատարակվել է նաև ուկրաիներեն, էստոներեն և այլ լեզուներով:

1939 թվականին "Մասունցի Դավթի" հազարամյակի տոնակատարության օրերին հսկայական աշխատանք կատարվեց, բացի նրանից որ էպոսի համահավաք տեքստը շքեղ ձևավորված լույս տեսավ թե հայերեն, թե ռուսերեն: Գիտական նստաշրջան տեղի ունեցավ, որի նյութերը լայնորեն լուսաբանվեցին մամուլում:

Այժմ ընդհանուր առմամբ գրի է առնված հայոց ազգային վիպերգի ավելի քան 70 տարբերակ, իրականացվել են ակադեմիական համահավաք նոր շքեղ հրատարակություններ:

Շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը

Միտելի ընթերցողներ, շարունակվում է "Զարյա" թերթի բաժանորդագրությունը 2014 թվականի 2-րդ կիսամյակի համար:

Բաժանորդագրվել դուք կարող եք փոստատարների մոտ, գյուղերի կապի բաժանմունքներում կամ թերթի խմբագրությունում: